ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ ՌՆԿ-ՆԸ-ԽԾՁԲ-17/1

«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար

Իրավական խորհրդատվության ծառայությունների, Հարկային խորհրդատվության ծառայությունների և Խորհրդատվության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՌՆԿ-ՆԸ-ԽԾՁԲ-17/1 ծածկագրով նախարակավորման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի**	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
3	տեխնիկական բութագիր չափաբաժին 3	-	3-րդ կետի	Ոչ մի հայտ չի ներկայացվել տվյալ չափաբաժնով
4	տեխնիկական բութագիր չափաբաժին 4	-	3-րդ կետի	
5	տեխնիկական բութագիր չափաբաժին 5	-	3-րդ կետի	
12	տեխնիկական բութագիր չափաբաժին 12	-	3-րդ կետի	
15	տեխնիկական բութագիր չափաբաժին 15	-	3-րդ կետի	

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՌՆԿ-ՆԸ-ԽԾՁԲ-17/1 ծածկագրով գնումների համակարգող Աշխեն Թանյանին:

Հեռախոս՝ (012) 75 00 57, ներքին 303
Էլեկոտրանային փոստ՝ procurement@reforms.am
Պատվիրատու՝ «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԹԱԳԻՐ
ՁԱՓԱԲԱԺԻՆ 3

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատական համակարգի բարեփոխումների խմբի գլխավոր փորձագետը պետք է խորհրդատվություն մատուցի «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին՝ մշակելու և ղեկավարելու իրավական համակարգի բարեփոխումները Հայաստանում: Փորձագետը անմիջապես հաշվետու է Կենտրոնի գործադիր տնօրենին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Իրավական բարեփոխումների ծրագրերի մշակման և ներդրման աջակցման խմբի ձևավորում,
- Իրավական բարեփոխումների խմբի աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարությանը և գերակայություններին համահունչ՝ ոլորտում առկա խնդիրների և բացերի վերհանում՝ համապատասխանաբար մշակելով դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկություններ և ծրագրեր,
- Ընթացիկ և առաջարկվող ռազմավարությունների/բարեփոխումների վերլուծություն, եզրակացությունների և առաջարկությունների կազմում, ազդեցության գնահատման իրականացում,
- Իրականացվող ծրագրերի շրջանակներում ոլորտի ներկայացուցիչների և այլ շահառուների (ներգրավված պետական մարմիններ, մասնավոր հատված, միջազգային կազմակերպություններ և այլն) հետ աշխատանքների կազմակերպում և ընթացիկ համագործակցության ապահովում,
- Բարեփոխումների օրակարգի զարգացմանը նպաստող ուղեցույցների, փաստաթղթերի, զեկույցների, հաշվետվությունների և այլ անհրաժեշտ նյութերի մշակում և շահառուներին դրանց ներկայացում,
- Իրավական համակարգի զարգացման միջազգային լավագույն փորձի և մեխանիզմների ուսումնասիրություն և ՀՀ իրավական համակարգում նման մեխանիզմների ներդրման անհրաժեշտության գնահատում, առաջարկների ներկայացում,
- Իրավական համակարգի բարեփոխումների մշակման և իրականացման հետ կապված այլ առաջադրանքների կատարում, ինչպես նաև նշված բնագավառում նոր ուսումնասիրության ոլորտների բացահայտում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- Առնվազն Իրավագիտության մագիստրոսի աստիճան (գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը կդիտարկվի որպես առավելություն),
- Իրավական ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ ղեկավար պաշտոնում,
- Առնվազն երկու օտար լեզվի գերազանց գրավոր և բանավոր իմացություն, հավելյալ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- MS Office: Word, PPT, Excel, Visio ծրագրերի իմացություն,
- Տվյալների վերլուծության և ծրագրային ապահովման գործիքակազմի վերաբերյալ հիմնական գիտելիքները կդիտվեն որպես առավելություն (ինչպիսիք են՝ SAS, SPSS, STATA և այլն):

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԹԱԳԻՐ
ՁԱՓԱԲԱԺԻՆ 4

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատական համակարգի ռեֆորմների խմբի փորձագետը պետք է աջակցի խմբին մշակել և ղեկավարել իրավական համակարգի բարեփոխումները Հայաստանում: Փորձագետը հաշվետու է իր անմիջական ղեկավարին և Կենտրոնի գործադիր տնօրենին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Աջակցել իրավական բարեփոխումների խմբի աշխատանքներին,
- Աջակցել ընթացիկ ռազմավարության վերլուծության, առկա խնդիրների և բացերի վերհանման, դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկությունների, գաղափարների և ծրագրերի մշակման գործընթացին,
- Աջակցել ընթացիկ և առաջարկվող բարեփոխումների վերլուծության, եզրակացությունների և առաջարկությունների կազմման, ազդեցության գնահատման իրականացման գործընթացներին,
- Ոլորտի ներկայացուցիչների և այլ շահառուների ակտիվ ներգրավում առանցքային ընթացիկ գործընթացներին, քննարկումներին և գործառնություններին,
- Բարեփոխումների օրակարգի զարգացմանը նպաստող ուղեցույցների, փաստաթղթերի, զեկույցների և այլ անհրաժեշտ նյութերի մշակման և շահառուներին դրանց ներկայացման աջակցում,
- Իրավական համակարգի զարգացման միջազգային լավագույն փորձի և մեխանիզմների ուսումնասիրություն և համապատասխան առաջարկների ներկայացում,
- Իրավական համակարգի բարեփոխումների մշակման և իրականացման հետ կապված այլ առաջադրանքների կատարում, ինչպես նաև նշված բնագավառում նոր ուսումնասիրության ոլորտների բացահայտում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- Առնվազն Իրավագիտության բակալավրի աստիճան (մագիստրոսի գիտական աստիճանը կդիտարկվի որպես առավելություն),
- Իրավական ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,
- Առնվազն երկու օտար լեզվի գերազանց գրավոր և բանավոր իմացություն, հավելյալ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- MS Office: Word, PPT, Excel, Visio ծրագրերի իմացություն,
- Տվյալների վերլուծության և ծրագրային ապահովման գործիքակազմի վերաբերյալ հիմնական գիտելիքները կդիտվեն որպես առավելություն (ինչպիսիք են՝ SAS, SPSS, STATA և այլն):

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԹԱԳԻՐ
ՁԱՓԱԲԱԺԻՆ 5

Աշխատանքի նկարագրությունը
Հարկային քաղաքականության և վարչարարության համակարգի բարեփոխումների խմբի գլխավոր փորձագետը պետք է խորհրդատվություն տրամադրի «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին մշակելու և ղեկավարելու հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումները Հայաստանում՝ բարելավելով հարկերի հավաքագրման մեխանիզմը, հարկ վճարողին մատուցված ծառայության դաշտը, ինչպես նաև նպաստելով եկամուտների հավաքագրման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներին իրավական դաշտի համապատասխանեցման և վերջինիս պատշաճ կիրարկման ապահովման միջոցով: Փորձագետը անմիջապես հաշվետու է Կենտրոնի գործադիր տնօրենին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հարկային քաղաքականության և վարչարարության ոլորտի բարեփոխումների ծրագրերի մշակման և ներդրման աջակցության խմբի ձևավորում,
- Խմբի աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարությանը և գերակայություններին համահունչ՝ ոլորտում առկա խնդիրների և բացերի վերհանում՝ համապատասխանաբար մշակելով դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկություններ և ծրագրեր,
- Ընթացիկ և առաջարկվող ռազմավարությունների/բարեփոխումների վերլուծություն, եզրակացությունների և առաջարկությունների կազմում, ազդեցության գնահատման իրականացում,
- Իրականացվող ծրագրերի շրջանակներում ոլորտի ներկայացուցիչների և այլ շահառուների (ներգրավված պետական մարմիններ (ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն), մասնավոր հատված, միջազգային կազմակերպություններ և այլն) հետ աշխատանքների կազմակերպում և ընթացիկ համագործակցության ապահովում,
- Բարեփոխումների օրակարգի զարգացմանը նպաստող ուղեցույցների, փաստաթղթերի, զեկույցների, հաշվետվությունների և այլ անհրաժեշտ նյութերի մշակում և շահառուներին դրանց ներկայացում,
- Միջազգային լավագույն փորձի և մեխանիզմների ուսումնասիրություն հարկային եկամուտների վարչարարության զարգացման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային եկամուտների վարչարարության համակարգում նման մեխանիզմների ներդրման անհրաժեշտության գնահատում, առաջարկների ներկայացում,
- Հարկային եկամուտների վարչարարության համակարգում բարեփոխումների մշակման և իրականացման հետ կապված այլ առաջադրանքների կատարում, ինչպես նաև նշված բնագավառում նոր ուսումնասիրության ոլորտների բացահայտում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- Հանրային կառավարման, Իրավագիտության, Տնտեսագիտության, Բիզնես կառավարման կամ համապատասխան այլ մասնագիտության մագիստրոսի աստիճան (գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը կդիտարկվի որպես առավելություն),
- Առնվազն 5 տարվա ղեկավարի աշխատանքային փորձ հարկային քաղաքականության/վարչարարության ոլորտում,
- Առնվազն երկու օտար լեզվի գերազանց գրավոր և բանավոր իմացություն, հավելյալ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- MS Office: Word, PPT, Excel, Visio ծրագրերի իմացություն,
- Տվյալների վերլուծության և ծրագրային ապահովման գործիքակազմի վերաբերյալ հիմնական գիտելիքները կդիտվեն որպես առավելություն (ինչպիսիք են՝ SAS, SPSS, STATA և այլն):

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԹԱԳԻՐ
ՁԱՓԱԲԱԺԻՆ 12

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների խմբի գլխավոր փորձագետը պետք է խորհրդատվություն տրամադրի «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամին աջակցելու գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների մշակման և ղեկավարման գործնթացին: Փորձագետը պետք է ունենա համապարփակ գիտելիք և փորձ գյուղատնտեսության ոլորտում: Փորձագետը անմիջապես հաշվետու է Կենտրոնի գործադիր տնօրենին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների ծրագրերի մշակման և ներդրման աջակցության խմբի ձևավորում,
- Խմբի անդամների աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարությանը և գերակայություններին համահունչ՝ ոլորտում առկա խնդիրների և բացերի վերհանում՝ համապատասխանաբար մշակելով դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկություններ և ծրագրեր,
- Ընթացիկ և առաջարկվող ռազմավարուությունների/բարեփոխումների վերլուծություն, եզրակացությունների և առաջարկությունների կազմում, ազդեցության գնահատման իրականացում,
- Իրականացվող ծրագրերի շրջանակներում ոլորտի ներկայացուցիչների և այլ շահառուների (ներգրավված պետական մարմիններ (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն), մասնավոր հատված, միջազգային կազմակերպություններ և այլն) հետ աշխատանքների կազմակերպում և ընթացիկ համագործակցության ապահովում,
- Բարեփոխումների օրակարգի զարգացմանը նպաստող ուղեցույցների, փաստաթղթերի, զեկույցների, հաշվետվությունների և այլ անհրաժեշտ նյութերի մշակում և շահառուներին դրանց ներկայացում,
- Միջազգային լավագույն փորձի և մեխանիզմների ուսումնասիրություն գյուղատնտեսության բարեփոխումների ոլորտում, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության ոլորտում նման մեխանիզմների ներդրման անհրաժեշտության գնահատում, և առաջարկների ներկայացում,
- Գյուղատնտեսության ոլորտում բարեփոխումների մշակման և իրականացման հետ կապված այլ առաջադրանքների կատարում, ինչպես նաև նշված բնագավառում նոր ուսումնասիրության ոլորտների բացահայտում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- Գյուղատնտեսության, Հանրային կառավարման, Տնտեսագիտության, Բիզնես կառավարման կամ համապատասխան այլ մասնագիտության մագիստրոսի աստիճան (գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը կդիտարկվի որպես առավելություն),
- Առնվազն 5 տարվա ղեկավարի աշխատանքային փորձ գյուղատնտեսության կառավարման ոլորտում կամ միջազգային կազմակերպություններում,
- Առնվազն երկու օտար լեզվի գերազանց գրավոր և բանավոր իմացություն, հավելյալ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- MS Office: Word, PPT, Excel, Visio ծրագրերի իմացություն,
- Տվյալների վերլուծության և ծրագրային ապահովման գործիքակազմի վերաբերյալ հիմնական գիտելիքները կդիտվեն որպես առավելություն (ինչպիսիք են՝ SAS, SPSS, STATA և այլն):

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԹԱԳԻՐ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 15

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի Ներդրումային/ՊՄԳ ծրագրերի խմբի փորձագետը պետք է աջակցի թիմին ներդրումային ծրագրերի գնահատման գործընթացում՝ ինչպես առկա ֆինանսական մոդելների վերլուծության, այնպես էլ նորերի ստեղծման միջոցով: Փորձագետը պետք է ունենա գիտելիքներ և փորձառություն ֆինանսական վերլուծության և կորպորատիվ ֆինանսների ոլորտներում և կարողանա մատնանշել շահութաբերության, կայունության, արդյունավետության և այլ չափանիշների հիման վրա ընտրված կենսունակ և ազդեցիկ ծրագրեր:
Բացի վերոնշյալից, փորձագետը պետք է աջակցի ՊՄԳ քաղաքականության, իրավական դաշտի կարգավորումների և ուղենիշների մշակմանը, ՊՄԳ ինստիտուցիոնալ համակարգի նախագծմանը և ձևավորմանը, նոր ՊՄԳ ստորաբաժանման ստեղծմանը և ՊՄԳ ծրագրերի իրականացման նախնական, ընթացիկ և իրականացմանը հաջորդող փուլերում գնահատման չափանիշների մշակմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Աջակցել իրականացնել ծրագրերի գնահատում, ներառյալ ֆինանսական մոդելավորում և դրամական հոսքերի կանխատեսում,
- Աջակցել Հայաստանում ՊՄԳ ծրագրերի իրականացման շրջանակի ստեղծմանը, ինչպես նաև համապատասխան օրենսդրությունը պատրաստելուն և/կամ փոփոխելուն,
- Աջակցել ՊՄԳ շրջանակներում ծրագրերի իրականացմանը, ներառյալ գործարքների կառուցվածքը և մրցութային փաստաթղթերի նախապատրաստումը,
- Աջակցել տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ներդրողների, հանրապետական գործադիր մարմինների, անկախ խորհրդատուների, միջազգային ֆինանսական հաստատությունների հետ հարաբերությունների համակարգմանը,
- Աջակցել ծրագրերիի գնահատման և մշտադիտարկման չափանիշների մշամանը,
- Հետազոտել տեղական և միջազգային շուկաները, ուսումնասիրել համապատասխան ոլորտներում միջազգային լավագույն փորձը և մշակել վերջինիս ներդրմանն ուղղված մեխանիզմներ:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

- Ֆինանսների, Բիզնես կառավարման, Տնտեսագիտության, կամ համապատասխան այլ մասնագիտության բակալավրի աստիճան (մագիստրոսի աստիճանը կդիտարկվի որպես առավելություն), համաշխարհային վարկանիշային համալսարաններում կրթությունը կդիտարկվի որպես առավելություն:
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական վերլուծության, կորպորատիվ ֆինանսների, ծրագրերի գնահատման ոլորտներում, կամ խորհրդատվական փորձ համապատասխան ոլորտում,
- Առնվազն երկու օտար լեզվի գերազանց գրավոր և բանավոր իմացություն, հավելյալ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- MS Office: Word, PPT, Excel, Visio ծրագրերի իմացություն,
- Տվյալների վերլուծության և ծրագրային ապահովման գործիքակազմի վերաբերյալ հիմնական գիտելիքները կդիտվեն որպես առավելություն (ինչպիսիք են՝ SAS, SPSS, STATA և այլն):